

ԽՈՐՀՐԴԻ 1990 թվականի նոյեմբերի 30-ի ՀՐԱՀԱՆԳ

**Աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նվազագույն
պահանջների մասին (89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածի իմաստով առաջին
անհատական հրահանգ) (89/654/ԵՏՀ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին»
պայմանագիրը, և, մասնավորապես, դրա 118ա հոդվածը,

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1), որը ներկայացվել է
Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով
խորհրդատվական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ Պայմանագրի 118ա հոդվածով նախատեսվում է, որ Խորհուրդը հրահանգների
միջոցով պետք է ընդունի հատկապես աշխատանքային միջավայրի բարելավումը
խթանելուն ուղղված նվազագույն պահանջներ՝ աշխատողների առողջության և
անվտանգության պահպանության ավելի լավ մակարդակ ապահովելու նպատակով,

քանի որ այդ հոդվածի համաձայն՝ նման հրահանգներում պետք է խուսափեն այնպիսի
վարչական, ֆինանսական և իրավական սահմանափակումներ սահմանելուց, որոնք հետ
կպահեին փոքր և միջին ձեռնարկություններ ստեղծելուց ու զարգացնելուց,

քանի որ Հանձնաժողովի կողմից աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և
առողջության հարցերով իր ծրագրերի վերաբերյալ հաղորդակցություններում (4)
նախատեսվում է այնպիսի հրահանգի ընդունում, որն ուղղված է աշխատավայրում
աշխատողների անվտանգությունը և առողջությունը երաշխավորելուն,

քանի որ Խորհուրդը, 1987 թվականի դեկտեմբերի 21-ի «Աշխատավայրում
անվտանգության, հիգիենայի և առողջության մասին» որոշմամբ (5) անդրադարձել է
Հանձնաժողովի կողմից Խորհրդին մոտ ապագայում աշխատավայրի կազմակերպման
նվազագույն պահանջներ ներկայացնելու մտադրությանը,

քանի որ աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելու համար կարևոր է աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջների պահպանումը,

քանի որ «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավումների խրախուսմանն ուղղված միջոցառումներ նախատեսելու մասին» 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի 16 (1) հոդվածի իմաստով սույն Հրահանգը անհատական հրահանգ է (6), և քանի որ վերջինիս դրույթները հետևաբար ամբողջությամբ կիրառվում են աշխատավայրերի նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգի առավել խիստ և (կամ) հատուկ դրույթներին,

քանի որ սույն Հրահանգը գործնականում նպաստում է ներքին շուկայի սոցիալական ուղղվածության զարգացմանը,

քանի որ 1985 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոխված 74/325/ԵՏՀ որոշման համաձայն (7), Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեն Հանձնաժողովի հետ խորհրդակցել է այս ոլորտում առաջարկների մշակման կապակցությամբ,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԲԱԺԻՆ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան

1. Սույն Հրահանգը, որն առաջին անհատական հրահանգն է 89/391/ԵՏՀ հրահանգի 16(1) հոդվածի իմաստով, սահմանում է աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջները, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածում:

2. Սույն Հրահանգը չի կիրառվում՝

ա) կազմակերպության և (կամ) հաստատության տարածքից դուրս օգտագործվող տրանսպորտային միջոցների կամ տրանսպորտային միջոցների ներսի աշխատավայրերի,

բ) ժամանակավոր կամ շարժական աշխատանքային տարածքների,

գ) արդյունահանող արդյունաբերությունների,

դ) ձկնորսական նավերի,

ե) գյուղատնտեսական կամ անտառային տնտեսության մաս կազմող, սակայն կազմակերպության շենքային տարածքներից հեռու գտնվող դաշտերի, անտառների և հողատարածքների նկատմամբ:

3. 89/391/ԵՏՀ հրահանգի դրույթներն ամբողջությամբ կիրառվում են 1-ին պարբերության մեջ նշվածների նկատմամբ՝ չհակասելով սույն Հրահանգն ավելի սահմանափակող և (կամ) հատուկ դրույթներին:

Հոդված 2

Սահմանումը

Սույն Հրահանգի նպատակներով «աշխատավայր» նշանակում է այնպիսի վայր, որը նախատեսված է կազմակերպության և (կամ) հաստատության աշխատակալանների տեղակայման համար և (կամ) կազմակերպության ու (կամ) հաստատության տարածքում ցանկացած այլ վայր, ուր մուտք է գործում աշխատողն իր աշխատանքի ընթացքում:

ԲԱԺԻՆ II

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3

Առաջին անգամ օգտագործվող աշխատավայրերը

1992 թվականի դեկտեմբերի 31-ից հետո առաջին անգամ օգտագործվող աշխատավայրերը պետք է բավարարեն I հավելվածում սահմանված անվտանգության և առողջության ապահովման պահանջները:

Հոդված 4

Արդեն օգտագործվող աշխատավայրերը

Մինչև 1993 թվականի հունվարի 1-ը գործող աշխատավայրերը պետք է բավարարեն II հավելվածում սահմանված անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջներն այդ ամսաթվից հետո առնվազն երեք տարվա ընթացքում:

Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է Պորտուգալիայի Հանրապետությանը, մինչև 1993 թվականի հունվարի 1-ը գործող աշխատավայրերը պետք է բավարարեն II հավելվածում սահմանված անվտանգության և առողջության ապահովման նվազագույն պահանջներն այդ ամսաթվից հետո առնվազն չորս տարվա ընթացքում:

Հոդված 5

Աշխատավայրերում փոփոխությունները

Եթե աշխատավայրերը ենթարկվում են փոփոխությունների, ընդլայնման և (կամ) վերափոխման 1992 թվականի դեկտեմբերի 31-ից հետո, ապա գործատուն նախաձեռնում է անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ այդ փոփոխությունները, ընդլայնումները և (կամ) վերափոխումները պետք է իրականացվեն I հավելվածում սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան:

Հոդված 6

Ընդհանուր պահանջներ

Աշխատողների անվտանգությունն ու առողջությունն ապահովելու նպատակով գործատուն պետք է ապահովի, որ

- դեպի վթարային ելքեր տանող երթուղիները և հենց այդ ելքերը միշտ ազատ լինեն,
- իրականացվի աշխատավայրերի, սարքավորումների և սարքերի, ինչպես նաև, մասնավորապես, I ու II հավելվածներում սահմանված աշխատավայրերի և սարքավորումների ու սարքերի տեխնիկական սպասարկումը և ցանկացած հայտնաբերված անսարքություն, որը սպառնում է աշխատողների անվտանգությանն ու առողջությանը, վերացվի հնարավորինս շուտ,

- աշխատավայրերը, սարքավորումները և սարքերը, ինչպես նաև մասնավորապես, I հավելվածի 6-րդ կետում և II հավելվածի 6-րդ կետում սահմանված աշխատավայրերը, սարքավորումները և սարքերը պարբերաբար մաքրվեն՝ ապահովելով հիգիենայի համապատասխան մակարդակը,
- վնասների կանխման կամ վերացման համար նախատեսված անվտանգության սարքավորումը և սարքերը, մասնավորապես, I ու II հավելվածներում նշվածները, մշտապես պահվեն սարքին վիճակում և պարբերաբար ստուգվեն:

Հոդված 7

Աշխատողների տեղեկատվություն

Չհակասելով 89/391/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածին՝ աշխատողները և (կամ) նրանց ներկայացուցիչները պետք է տեղեկացվեն՝ աշխատավայրում անվտանգության և առողջության ապահովման նպատակով ձեռնարկվող բոլոր միջոցների մասին:

Հոդված 8

Աշխատողների հետ խորհրդակցություն և աշխատողների մասնակցությունը

Աշխատողների և (կամ) նրանց ներկայացուցիչների հետ խորհրդակցությունը կամ նրանց մասնակցությունը սույն Հրահանգով՝ ներառյալ դրա հավելվածով կարգավորվող խնդիրների կապակցությամբ, իրականացվում է 89/391/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածի համաձայն:

ԲԱԺԻՆ III

ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 9

Հավելվածներում կատարվող փոփոխությունները

Հավելվածներում կատարվում են խիստ տեխնիկական բնույթի փոփոխություններ, որոնք պայմանավորված են՝

– «Տեխնիկական ներդաշնակեցման և նախագծի ստանդարտացման, աշխատավայրերի մասերի արտադրության կամ կառուցման վերաբերյալ» հրահանգների ընդունմամբ,

Աշխատավայրերի հետ կապված տեխնիկական առաջընթացով, միջազգային կանոնակարգերում կամ բնութագրերում և գիտելիքներում փոփոխություններով, ընդունվում են 89/391/ԵՏՀ հրահանգի 17–րդ հոդվածում սահմանված կարգով:

Հոդված 10

Եզրափակիչ դրույթները

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգին հետևելու համար անհրաժեշտ իրավական օրենքներ, կանոնակարգեր ու վարչական ակտեր 1992 թվականի դեկտեմբերի 31-ից ոչ ուշ: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Այնուամենայնիվ, Հունաստանի Հանրապետության համար սահմանված ամսաթիվը 1994 թվականի դեկտեմբերի 31–ն է:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք արդեն ընդունել են կամ ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

3. Անդամ պետությունները յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ սույն Հրահանգի գործնական կիրառման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով՝ ներկայացնելով աշխատողների և գործատուների տեսակետները:

Հանձնաժողովը տեղեկացնում է Եվրոպական պառլամենտին, Խորհրդին, Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեին ու Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական խորհրդին:

4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ, Խորհուրդ ու Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտե սույն Հրահանգի կիրառման վերաբերյալ պարբերաբար զեկույց է ներկայացնում՝ հաշվի առնելով 1–3–րդ պարբերությունները:

Հոդված 11

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1989 թվականի նոյեմբերի 30-ին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

1-ԻՆ ՀՐԱՀԱՆԳԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Նախնական նշում

Սույն հավելվածում սահմանված պարտավորությունները կիրառվում են, եթե պահանջվում է աշխատավայրի, գործունեության առանձնահատկություններով, հանգամանքներով պայմանավորված լինելու կամ վտանգի դեպքում:

2.

Կայունությունը և ամրությունը

Անհրաժեշտ է, որ աշխատավայրերի համար որպես տեղակայման տարածք ծառայող շենքերն ունենան այդ տարածքի օգտագործման բնույթին համապատասխան կառուցվածք և ամրություն:

3.

Էլեկտրական հոսանքի միացումները

Էլեկտրական հոսանքի միացումները պետք է կազմակերպված և տեղադրված լինեն այնպես, որ հրդեհի կամ պայթյունի վտանգ չառաջացնի, աշխատողները պետք է համապատասխանորեն պաշտպանված լինեն ուղղակի կամ անուղղակի շփման հետևանքով առաջացող պատահարների վտանգից:

Նախագծումը, տեղադրումը և նյութի ընտրությունը, ինչպես նաև պահպանության ապահովման սարքերը պետք է ունենան համապատասխան լարում, արտաքին պայմաններ, ինչպես նաև իրավասու մարդիկ պետք է կատարեն միացումները:

4.

Վթարային անցուղիները և ելքերը

4.1.

Վթարային անցուղիները և վթարային ելքերը պետք է մշտապես ազատ պահվեն և, հնարավորության դեպքում անմիջապես բաց տարածություն կամ անվտանգ վայր տարվեն:

4.2.

Վտանգի դեպքում աշխատողները պետք է հնարավորություն ունենան արագորեն և անվտանգ տարահանելու բոլոր աշխատակայանները:

4.3.

Վթարային անցուղիների և ելքերի թիվը, բաշխվածությունն ու չափերը պետք է համարժեք լինեն օգտագործման, սարքավորումների և աշխատավայրի չափսերին ու մարդկանց առավելագույն թվին:

4.4.

Վթարային դռները պետք է բացվեն դեպի դուրս:

Չի թույլատրվում տեղադրել սահովի (տարաշարժուն) կամ պտտվող դռներ հատկապես վթարային ելքերի դեպքում:

Վթարային դռները չպետք է կողպվեն կամ փակվեն այնպես, որ որևէ մեկը, ում անհրաժեշտ է օգտվել դրանից վթարի դեպքում, չկարողանա արագ բացել դրանք:

4.5.

Հատուկ վթարային անցուղիները և ելքերը պետք է ցույց տրվեն 77/576/ԵՏՀ (8) հրահանգը օրենք փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված նշանների միջոցով:

Այդ նշանները պետք է հուսալիորեն փակցվեն համապատասխան վայրերում և պահպանվեն մշտապես:

4.6.

Վթարային դռները չպետք է կողպվեն:

Վթարային անցուղիները և ելքերը, ինչպես նաև դրանց միացող երթուղիները և դռները պետք է ազատ լինեն որևէ խոչընդոտներից այնպես, որ դրանք յուրաքանչյուր պահի օգտագործվեն առանց խոչընդոտների:

4.7.

Հոսանքազրկման դեպքում լուսավորության կարիք ունեցող վթարային անցուղիներն ու ելքերը պետք է ապահովվեն բավարար հզորություն ունեցող վթարային լուսավորությամբ:

5.

Հրդեհի բացահայտումը և մարումը

5.1.

Հաշվի առնելով շենքերի չափսերը և օգտագործման նպատակները, այնտեղ տեղադրված սարքավորումները, առկա նյութերի ֆիզիկական և քիմիական հատկանիշները, ներկա գտնվող մարդկանց հնարավոր առավելագույն թիվը, աշխատանքի վայրում պետք է տեղադրված լինեն հակահրդեհային համապատասխան սարքեր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրդեհի ազդասարքեր և ազդանշանային համակարգեր:

5.2.

Ոչ ավտոմատ հակահրդեհային սարքերը պետք է լինեն հասանելի, իսկ օգտագործման տեսանկյունից՝ պարզ:

Սարքերը պետք է ցույց տրվեն 77/576/ԵՏՀ հրահանգը օրենք փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված նշանների միջոցով:

Այդ նշանները պետք է հուսալիորեն փակցվեն համապատասխան վայրերում և մշտապես պահպանվեն:

6.

Աշխատանքի վայրի փակ տարածքների օդափոխությունը

6.1.

Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ, որպեսզի աշխատանքի վայրի փակ տարածքներն ունենան բավարար ծավալով մատակարարվող մաքուր օդ՝ հաշվի առնելով աշխատանքի կազմակերպման կիրառվող մեթոդները և աշխատողների վրա դրված ֆիզիկական պահանջները:

Արհեստական օդափոխության համակարգի կիրառման դեպքում այն պետք է պահվի սարքին վիճակում:

Կառավարման համակարգի միջոցով պետք է ազդանշան տրվի օդափոխության խափանման ցանկացած դեպքի մասին, եթե այն անհրաժեշտ է՝ աշխատողների առողջությունն ապահովելու համար:

6.2.

Օդակարգավորիչների կամ մեխանիկական օդափոխության սարքավորումների օգտագործման դեպքում դրանք պետք է այնպես շահագործվեն, որ աշխատողները չենթարկվեն միջանցիկ քամիների բացասական ազդեցությանը:

Օդի աղտոտման միջոցով աշխատողների անվտանգության և առողջության համար անմիջական վտանգ ներկայացնող թափոնների կամ աղբի կույտերը պետք է անհապաղ հեռացվեն:

7.

Սենյակային ջերմաստիճանը

7.1.

Աշխատանքային ժամերին աշխատանքային սենյակի ջերմաստիճանը պետք է բավարար լինի աշխատողների համար՝ հաշվի առնելով աշխատանքի կազմակերպման համար կիրառվող մեթոդները և աշխատողների վրա դրված ֆիզիկական պահանջները:

7.2.

Հանգստի տարածքների, հերթապահ աշխատողների համար նախատեսված սենյակների, սանհանգույցների, ճաշարանների և առաջին օգնության սենյակների ջերմաստիճանը պետք է համապատասխանի նշված տարածքների նպատակային նշանակությանը:

7.3.

Պատուհանների, լուսանցքների և ապակյա միջնապատերի միջով աշխատավայր ներթափանցող արևային լույսը պետք է չափավոր լինի՝ հաշվի առնելով աշխատանքի և աշխատավայրի բնույթը:

8.

Սենյակի բնական և արհեստական լուսավորությունը

8.1.

Աշխատանքի վայրը պետք է ստանա հնարավորինս բավարար բնական լուսավորություն, ինչպես նաև ունենա արհեստական լուսավորության սարքեր՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման համար:

8.2.

Աշխատատեղ ունեցող սենյակներում և անցուղիներում լուսային սարքերը պետք է տեղադրվեն այնպես, որ բացառվի ամրացված լուսային սարքի պատճառով հնարավոր դժբախտ պատահարի ռիսկը:

8.3.

Առավելապես բարձր ռիսկի ենթակա աշխատողների աշխատանքի վայրերը արհեստական լուսավորության խափանումների դեպքում պետք է ապահովվեն բավարար հզորություն ունեցող վթարային լուսավորությամբ:

9.

Սենյակների հատակները, պատերը, առաստաղները և տանիքները

9.1.

Աշխատավայրերի հատակները չպետք է ունենան վտանգավոր ուռուցիկություններ, փոսեր կամ թեքություններ, պետք է լինեն ամուր, կայուն և պետք է սայթաքուն չլինեն:

Աշխատակայաններ ունեցող աշխատավայրերը պետք է համապատասխանաբար մեկուսացված լինեն՝ հաշվի առնելով տվյալ ձեռնարկության տեսակը և աշխատողների ֆիզիկական գործունեությունը:

9.2.

Սենյակների հատակների, պատերի և առաստաղների մակերեսը պետք է այնպիսին լինի, որ հնարավոր լինի սահմանված սանիտարական նորմերին համապատասխան մաքրել կամ նորացնել դրանք:

9.3.

Սենյակներում կամ աշխատատեղերի և երթուղիների մոտակայքում գտնվող թափանցիկ ու կիսաթափանցիկ պատերը, մասնավորապես ապակյա միջնապատերը, պետք է հստակ նշագրվեն, պատրաստված լինեն անվտանգ նյութերից կամ պաշտպանված լինեն կոտրման կամ բախման պարագայում աշխատողներին մարմնական վնասվածք պատճառելու հնարավոր դեպքերից:

9.4.

Արգելվում է մուտքը դեպի ոչ բավարար ամրության տանիքները, բացառությամբ այն դեպքերի, երբ սարքավորում է տրամադրվում՝ աշխատանքն անվտանգ կատարելու համար:

10.

Պատուհանները և լուսանցքները

10.1.

Աշխատողները պետք է հնարավորություն ունենան անվտանգ բացելու, փակելու, կարգավորելու, ամրացնելու պատուհանները, լուսանցքները և օդափոխիչները՝: Բաց վիճակում պատուհանները, լուսանցքները և օդափոխիչները չպետք է այնպես տեղադրված լինեն, որ վտանգ ներկայացնեն աշխատողների համար:

10.2.

Պատուհանները և լուսանցքները պետք է համալրված լինեն սարքավորումներով կամ այլ կերպ տեղադրված հարմարանքներով այնպես, որ առանց վտանգի ենթարկելու տվյալ աշխատանքը կատարող կամ ներսում կամ շինության շուրջ գտնվող անձանց անվտանգությունը և առողջությունը, հնարավոր լինի մաքրել այն:

11.

Դռները և դարպասները

11.1.

Դռների և դարպասների դիրքը, թիվը, չափսերը, ինչպես նաև դրանց պատրաստման համար օգտագործված նյութերը պետք է որոշվեն՝ հաշվի առնելով սենյակների կամ տարածքների բնույթը և օգտագործման նպատակը:

11.2.

Թափանցիկ դռների վրա պետք է համապատասխանաբար փակցվեն նշաններ տեսանելի մակարդակի վրա:

11.3.

Տարբեր կողմեր բացվող դռներն ու դարպասները պետք է լինեն թափանցիկ կամ ունենան թափանցիկ պանելներ:

11.4.

Եթե դռների և դարպասների թափանցիկ կամ կիսաթափանցիկ մակերեսները պատրաստված չեն անվտանգ նյութերից և առկա է վտանգ, որ աշխատողները կարող են մարմնական վնասվածք ստանալ դռան կամ դարպասի կոտրվելու հետևանքով, ապա նշված մակերեսները պետք է ունենան համապատասխան պաշտպանվածություն:

11.5.

Սահովի (տարաշարժուն) դռներն ու դարպասները պետք է ունենան անվտանգության սարք՝ ռելսերից դուրս գալու կամ վայր ընկնելու վտանգը կանխելու նպատակով:

11.6.

Դեպի վերև բացվող դռներին ու դարպասներին պետք է ամրացված լինեն համապատասխան մեխանիզմներ, որոնք թույլ չեն տա դրանց հետ ընկնելը:

11.7.

Վթարային ելքերի դռների վրա պետք է նշում լինի:

Պետք է հնարավոր լինի առանց հատուկ աջակցության դրանք բացել ներսից ցանկացած ժամանակ առանց հատուկ աջակցության:

Պետք է հնարավոր լինի բացել դռները, երբ աշխատավայրերում մարդիկ կան:

11.8.

Գլխավորապես տրանսպորտային փոխադրամիջոցների երթևեկության համար նախատեսված դարպասներին անմիջականորեն հարող տարածքում պետք է տեղադրվեն դռներ՝ հետիոտների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հետիոտնը կարող է անվտանգ անցնել տրանսպորտային փոխադրամիջոցների համար նախատեսված դարպասների միջով, իսկ նման դռների կամ դարպասների վրա պետք է նշումներ լինեն:

11.9.

Մեխանիկական դռներն ու դարպասները պետք է այնպես աշխատեն, որ աշխատողների համար բացառվի դժբախտ պատահարի որևէ ռիսկ:

Դրանք պետք է ունենան հեշտ բացահայտվող և հասանելի տեղում ամրացված վթարային անջատման սարք, և եթե հոսանքազրկման ժամանակ դրանք մեխանիկորեն (ավտոմատ կերպով) չեն բացվում, ապա այն պետք է հնարավոր լինի բացել ձեռքով:

12.

Երթուղիներ – վտանգավոր տարածքներ

12.1.

Երթուղիները, այդ թվում՝ աստիճանները, ամրացված ձեռնասանդուղքները, բեռնահարթակները և թեքահարթակները պետք է տեղադրվեն և ունենան այնպիսի չափսեր, որ առանց վտանգի ենթարկելու երթուղիների մոտակայքում աշխատող աշխատողներին, հետիոտներին կամ տրանսպորտային փոխադրամիջոցներին տան մուտքի ազատ և անվտանգ հնարավորություն:

12.2.

Հետիոտների և (կամ) իրերի տեղաշարժի համար նախատեսված անցուղիները պետք է ունենան հնարավոր օգտագործողների թվին և ձեռնարկության տեսակին համապատասխանող չափսեր:

Երթուղիներով տրանսպորտային փոխադրամիջոցների օգտագործման դեպքում հետիոտներին պետք է հատկացվի բավարար չափսեր ունեցող անվտանգ տարածություն:

12.3.

Բավարար չափսեր ունեցող տարածություն պետք է նախատեսվի տրանսպորտային փոխադրամիջոցներին հատկացված երթուղիների և դռների, դարպասների, հետիոտն անցուղիների, միջանցքների և սանդուղքների միջև:

12.4.

Աշխատողների պահպանությունն ապահովելու նպատակներով սենյակների օգտագործմամբ և սարքավորումներով պայմանավորված՝ երթևեկության ուղիները պետք է հստակ սահմանվեն:

12.5.

Եթե աշխատավայրը ներառում է այնպիսի տարածք, որտեղ, աշխատանքի բնույթով պայմանավորված, աշխատողներին վտանգ է սպառնում կամ առարկաների ընկնելու ռիսկ կա, ապա աշխատավայրը հնարավորինս պետք է զինված լինի ոչ իրավասու անձանց մուտքն արգելող միջոցներով:

Պետք է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ վտանգավոր տարածքներ մուտք գործող իրավասու անձանց պաշտպանելու նպատակով:

Վտանգավոր տարածքները պետք է հստակ նշված լինեն:

13.

Հատուկ միջոցառումներ՝ շարժասանդուղքների և շարժվող հատակների համար

Շարժասանդուղքները և շարժվող հատակները պետք է անվտանգ գործեն:

Դրանք պետք է զինված լինեն անվտանգության անհրաժեշտ սարքերով:

Դրանք պետք է ունենան հեշտ բացահայտվող և հասանելի տեղում ամրացված վթարային անջատման սարքեր:

14.

Բեռնահարթակները և թեքահարթակները

14.1.

Բեռնահարթակները և թեքահարթակները պետք է համապատասխանեն փոխադրվող բեռների չափսերին:

14.2.

Բեռնահարթակները պետք է առնվազն մեկ ելք ունենան:

Տեխնիկապես հնարավոր լինելու դեպքում որոշակի լայնություն ունեցող բեռնահարթակների յուրաքանչյուր վերջնամասում լինի առնվազն մեկ ելք:

14.3.

Բեռնման թեքահարթակները հնարավորինս պետք է բավականաչափ անվտանգ լինեն՝ դրանց վրայից աշխատողների վայր ընկնելը կանխելու համար:

15.

Սենյակների չափսերը, օդային տարածությունը և աշխատակայանում տեղաշարժվելու ազատությունը

15.1.

Աշխատասենյակները պետք է ունենան բավարար մակերես, բարձրություն և օդային տարածություն, որը թույլ կտա մարդկանց աշխատել՝ առանց անվտանգությանը և առողջությանն ու բարեկեցությանը սպառնացող ռիսկերի:

15.2.

Աշխատակայանում ազատ չգրադեցված տարածքի չափսերը պետք է հաշվարկվեն այնպես, որ աշխատողներին տրվի տեղաշարժի բավարար ազատություն՝ իրենց աշխատանքն իրականացնելու համար:

Եթե դա հնարավոր չէ իրականացնել՝ պայմանավորված աշխատավայրի առանձնահատկություններով, աշխատողին պետք է իր աշխատատեղի մոտակայքում տեղաշարժի բավարար ազատություն տրվի:

16.

Հանգստի սենյակը

16.1.

Ինչպես պահանջվում է աշխատողների անվտանգության և առողջության, մասնավորապես՝ իրականացվող գործունեության բնույթով պայմանավորված կամ աշխատողների որոշակի թվից ավելի աշխատողների առկայության դեպքում, աշխատողները պետք է ապահովվեն հեշտ հասանելի հանգստի սենյակներով:

Սույն դրույթը չի կիրառվում, եթե աշխատողներն աշխատում են գրասենյակներում կամ նմանատիպ աշխատանքային սենյակներում, որոնք ընդմիջումների ժամանակ համարժեք հանգիստ են ապահովում:

16.2.

Հանգստի սենյակները պետք է լինեն բավականին ընդարձակ և ունենան սեղաններ, հենակներով աթոռներ, որոնց թիվը պետք է համապատասխանի աշխատողների թվին:

16.3.

Հանգստի սենյակներում պետք է ներդրվեն համապատասխան միջոցներ՝ ծխախոտի ծխից առաջացած անհարմարության դեմ չծխողների պաշտպանության համար:

16.4.

Աշխատանքի ժամերի պարբերական և հաճախակի ընդհատումների ու հանգստի սենյակի բացակայության դեպքում տրամադրվեն այլ սենյակներ, որտեղ աշխատողները կարող են մնալ ընդհատման ժամանակ, եթե դա անհրաժեշտ է աշխատողների անվտանգության և առողջության համար:

Ծխախոտի ծխից առաջացած անհարմարության դեմ անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ չծխողների պաշտպանության համար:

17.

Հղի կանայք և կերակրող մայրերը

Հղի կանայք և կերակրող մայրերը պետք է համապատասխան պայմաններում հանգստի նպատակով պառկելու հնարավորություն ունենան:

18.

Սանիտարական և տեխնիկական հարմարությունները

18.1.

Հանդերձարանները և պահարանները

18.1.1.

Աշխատողները պետք է ապահովվեն համապատասխան հանդերձարաններով, եթե նրանք պետք է կրեն հատուկ աշխատանքային համազգեստ և առողջության կամ պարկեշտության նկատառումներից ելնելով, նրանք չեն կարող փոխվել մեկ այլ սենյակում:

Հանդերձարանները պետք է լինեն հեշտ հասանելի, ունենան բավարար տարողունակություն և նստատեղեր:

18.1.2.

Հանդերձարանները պետք է լինեն բավական ընդարձակ և ունենան այնպիսի հարմարություններ, որպեսզի յուրաքանչյուր աշխատող աշխատանքային ժամերի ընթացքում տեղավորի իր հագուստը փակվող պահարանում:

Պայմանավորված հանգամանքներով (օրինակ՝ վտանգավոր նյութեր, խոնավություն, կեղտ)՝ աշխատանքային հագուստի պահարանները պետք է առանձնացված լինեն սովորական հագուստի պահարաններից:

18.1.3.

Անհրաժեշտ է դրույթ նախատեսել՝ տղամարդկանց և կանանց համար առանձին հանդերձարաններ կամ միևնույն հանդերձարանի առանձնացված օգտագործում ապահովելու համար:

18.1.4.

Եթե 18.1.1 կետով նախատեսված հանդերձարանների անհրաժեշտություն չկա, ապա անհրաժեշտ է ապահովել, որ յուրաքանչյուր աշխատողին տեղ հատկացվի՝ հագուստը պահելու համար:

18.2.

Լողացնցուղները և լվացարանները

18.2.1.

Աշխատողները պետք է ապահովվեն համապատասխան և հարմար լողացնցուղներով, եթե դա է պահանջում աշխատանքի բնույթը կամ առողջական վիճակը:

Անհրաժեշտ է դրույթ նախատեսել՝ տղամարդկանց և կանանց համար առանձին ցնցուղասենյակներ կամ միևնույն ցնցուղասենյակներից առանձնացված օգտագործում ապահովելու համար:

18.2.2.

Ցնցուղասենյակները պետք է բավարար չափով ընդարձակ լինեն՝ հիգիենայի համարժեք պայմաններում առանց դժվարությունների լողանալու համար:

Լողացնցուղները պետք է ապահովված լինեն հոսող սառը և տաք ջրերով:

18.2.3.

Եթե 18.2.1 հոդվածի առաջին ենթապարբերությամբ լողացնցուղների առկայությունը պարտադիր չէ, ապա պետք է ապահովվել հոսող ջրով (անհրաժեշտության դեպքում՝ տաք ջրով) ապահովված համապատասխան և հարմար լվացարաններով՝ աշխատատեղերի և հանդերձարանների մոտակայքում:

Այդ լվացարանները պետք է առանձնացված լինեն տղամարդկանց և կանանց համար կամ առանձին օգտագործվեն տղամարդկանց ու կանանց կողմից՝ ելնելով պարկեշտությունից:

18.2.4.

Եթե սենյակները, որտեղ գտնվում են լողացնցուղները կամ լվացարանները, առանձնացված են հանդերձարանից, ապա պետք է դրանց միջև ապահովել դյուրին մուտքն ու ելքը:

18.3.

Զուգարանները և լվացարանները

Պետք է ապահովել առանձին հարմարություններ, բավարար թվով զուգարանակոնքեր և լվացարաններ, որոնք գտնվում են աշխատակայանների, հանգստի սենյակների, հանդերձարանների և լողացնցուղի սենյակների մոտակա տարածքներում:

Անհրաժեշտ է նախատեսել դրույթ՝ տղամարդկանց և կանանց համար առանձին զուգարաններ կամ միևնույն զուգարանից առանձնացված օգտագործում ապահովելու համար:

19.

Առաջին օգնության սենյակները

19.1.

Անհրաժեշտ է ապահովել առաջին օգնության մեկ կամ ավելի սենյակներով՝ ելնելով տարածքի չափսերից, իրականացվող գործունեության տեսակից և վթարների հաճախականությունից:

19.2.

Առաջին օգնության սենյակները պետք է հագեցած լինեն առաջին օգնության կարևոր սարքավորումներով և սարքերով, ինչպես նաև ապահովեն սայլակների դյուրին մուտքը:

Դրանք պետք է ցույց տրվեն 77/576/ԵՏՀ հրահանգը օրենք փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված՝ փակցված նշանների միջոցով:

19.3.

Ավելին, առաջին օգնության սարքերը պետք է հասանելի լինեն բոլոր այն վայրերում, որտեղ դա են պահանջում աշխատանքային պայմանները:

Այս սարքավորումների վրա պետք է համապատասխան նշումներ լինեն և դրանք հեշտ հասանելի լինեն:

20.

Հաշմանդամ աշխատողները

Աշխատավայրերն անհրաժեշտության դեպքում պետք է հաշմանդամ աշխատողներին հաշվի առնելով կազմակերպված լինեն:

Սույն դրույթը կիրառվում է մասնավորապես դռների, միջանցքների, աստիճանավանդակի, ցնցուղների, լվացարանների, զուգարանների և հաշմանդամների կողմից ուղղակիորեն օգտագործվող կամ զբաղեցրած աշխատակայանների նկատմամբ:

21.

Բացօթյա աշխատավայրերը (հատուկ դրույթներ)

21.1.

Բացօթյա աշխատատեղերը, երթուղիները և մյուս տարածքները կամ հարմարությունները, որոնք օգտագործվում են կամ իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնելիս զբաղեցված են աշխատողների կողմից, պետք է այնպես կազմակերպված լինեն, որ հետիոտները և փոխադրամիջոցները կարողանան անվտանգ տեղաշարժվել:

12-րդ, 13-րդ և 14-րդ բաժինները կիրառվում են նաև ձեռնարկության տարածքում հիմնական երթևեկության ուղիների (դեպի մշտական աշխատակայաններ տանող երթուղիներ), կազմակերպության սարքերի կանոնավոր սպասարկման և վերահսկման համար օգտագործվող երթուղիների, ինչպես նաև բեռնահարթակների նկատմամբ:

12-րդ բաժինը նաև կիրառվում է բացօթյա աշխատավայրերի նկատմամբ:

21.2.

Բացօթյա աշխատավայրերը պետք է ունենան բավարար արհեստական լուսավորություն, եթե ցերեկային լույսը բավարար չէ:

21.3.

Եթե աշխատողները բացօթյա պայմաններում են աշխատում, ապա նման աշխատավայրերը հնարավորինս պետք է կազմակերպված լինեն այնպես, որ աշխատողները.

ա) պաշտպանված լինեն եղանակային անբարենպաստ պայմաններից և, անհրաժեշտության դեպքում, ընկնող առարկաներից,

բ) չգտնվեն աղմուկի վնասակար մակարդակի կամ վնասակար արտաքին ազդեցությունների ներքո, ինչպիսիք գազը, գոլորշին կամ փոշին են,

գ) կարողանան վտանգի դեպքում արագ հեռանալ իրենց աշխատավայրերից կամ կարողանան արագ օգնություն ստանալ,

դ) չսայթաքեն կամ վայր չընկնեն:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀՐԱՀԱՆԳԻ 4-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԱՐԴԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1.

Նախնական նշում

Սույն հավելվածում սահմանված պարտավորությունները կիրառվում են, եթե դա պահանջվում է, ելնելով աշխատավայրի, գործունեության առանձնահատկություններից, հանգամանքներից կամ վտանգով պայմանավորված լինելու դեպքում:

2.

Կայունությունը և ամրությունը

Անհրաժեշտ է, որ աշխատավայրերի համար որպես տեղակայման տարածք ծառայող շենքերն ունենան այդ տարածքի օգտագործման բնույթին համապատասխան կառուցվածք և ամրություն:

3.

Էլեկտրական սարքավորումները

Էլեկտրական սարքավորումները պետք է կազմակերպված և տեղադրված լինեն այնպես, որ չներկայացնի հրդեհի կամ պայթյունի վտանգ, աշխատողները պետք է համապատասխանորեն պաշտպանված լինեն ուղղակի կամ անուղղակի շփման հետևանքով առաջացող պատահարների վտանգից:

Էլեկտրական սարքավորումները, ինչպես նաև պահպանության ապահովման սարքերը պետք է ունենան համապատասխան լարում, արտաքին պայմաններ, ինչպես նաև իրավասու մարդիկ պետք է կատարեն միացումները:

4.

Վթարային անցուղիները և ելքերը

4.1.

Վթարային անցուղիները և վթարային ելքերը պետք է մշտապես պահվեն ազատ և տանեն անմիջապես բաց տարածություն կամ անվտանգ վայր:

4.2.

Վտանգի դեպքում աշխատողները պետք է հնարավորություն ունենան հնարավորինս արագորեն և անվտանգ տարիանել բոլոր աշխատակայանները:

4.3.

Պետք է բավարար թվով տարիանման ուղիներ և վթարային ելքեր լինեն:

4.4.

Վթարային դռները պետք է բացվեն դեպի դուրս:

Չի թույլատրվում սահովի կամ պտտվող դռներ նախատեսել վթարային ելքերի համար:

Վթարային դռները չպետք է կողավեն կամ փակվեն այնպես, որ որևէ մեկը չկարողանա բացել դրանք վթարի դեպքում:

4.5.

Հատուկ վթարային անցուղիները և ելքերը պետք է ցույց տրվեն 77/576/ԵՏՀ հրահանգը օրենք փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված նշանների միջոցով:

Այդ նշանները պետք է հուսալիորեն փակցվեն համապատասխան վայրերում և պահպանվեն մշտապես:

4.6.

Վթարային դռները չպետք է կողավեն:

Վթարային անցուղիները և ելքերը, ինչպես նաև դրանց միացող երթուղիները և դռները պետք է ազատ լինեն որևէ խոչընդոտներից, որպեսզի դրանցից ցանկացած ժամանակ կարողանան օգտվել առանց որևէ խոչընդոտի:

4.7.

Հոսանքազրկման դեպքում լուսավորության կարիք ունեցող վթարային անցուղիները և ելքերը պետք է ապահովվեն բավարար հզորությամբ վթարային լուսավորությամբ:

5.

Հրդեհի բացահայտումը և մարումը

5.1.

Հաշվի առնելով շենքերի չափսերը և օգտագործման նպատակները, այնտեղ տեղադրված սարքավորումները, առկա նյութերի ֆիզիկական և քիմիական հատկանիշները, ներկա գտնվող մարդկանց հնարավոր առավելագույն թիվը՝ աշխատանքի վայրում պետք է տեղադրված լինեն հակահրդեհային համապատասխան սարքեր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հրդեհը բացահայտող սարք և ազդանշանային համակարգ:

5.2.

Ոչ ավտոմատ հակահրդեհային սարքերը պետք է լինեն հեշտ հասանելի, իսկ օգտագործման տեսանկյունից՝ պարզ:

Դրանք պետք է ցույց տրվեն 77/576/ԵՏՀ հրահանգը օրենք փոխատեղող ազգային կանոնակարգերով սահմանված նշանների միջոցով:

Այդ նշանները պետք է հուսալիորեն փակցվեն համապատասխան վայրերում և պահպանվեն մշտապես:

6.

Աշխատանքի վայրի փակ տարածքների օդափոխությունը

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ հետևելու համար, որպեսզի աշխատանքի վայրի փակ տարածքներն ունենան բավարար ծավալով մատակարարվող մաքուր օդ՝ հաշվի առնելով աշխատանքի կազմակերպման կիրառվող մեթոդները և աշխատողների վրա դրված ֆիզիկական պահանջները:

Արհեստական օդափոխության համակարգի կիրառման դեպքում այն պետք է պահվի սարքին վիճակում:

Կառավարման համակարգի միջոցով պետք է ազդանշան տրվի խափանման ցանկացած դեպքի մասին, եթե անհրաժեշտ է աշխատողների առողջության ապահովման համար:

7.

Սենյակային ջերմաստիճանը

7.1.

Աշխատանքային ժամերին, աշխատավայրերի սենյակների ջերմաստիճանը պետք է բավարար լինի աշխատողների համար՝ հաշվի առնելով աշխատանքի կազմակերպման կիրառվող մեթոդները և աշխատողների վրա դրված ֆիզիկական պահանջները:

7.2.

Հանգստի տարածքների, հերթապահ աշխատողների համար նախատեսված սենյակների, սանհանգույցների, ճաշարանների և առաջին օգնության սենյակների ջերմաստիճանը պետք է համապատասխանի նշված տարածքների օգտագործման նպատակներին:

8.

Բնական և արհեստական լուսավորությունը

8.1.

Աշխատանքի վայրը պետք է ստանա հնարավորինս բավարար բնական լուսավորություն, ինչպես նաև ունենա արհեստական լուսավորության սարքեր՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման համար:

8.2.

Հատկապես բարձր ռիսկի ենթակա աշխատողների՝ աշխատանքի վայրում արհեստական լուսավորության խափանումների դեպքում տեղադրվի համարժեք հզորությամբ վթարային լուսավորություն:

9.

Դռները և դարպասները

9.1.

Թափանցիկ դռների վրա համապատասխանաբար պետք է փակցվեն նշաններ տեսանելի մակարդակի վրա:

9.2.

Առաջ բացվող դռներն ու դարպասները պետք է լինեն թափանցիկ կամ ունենան թափանցիկ պանելներ:

10.

Վտանգավոր տարածքները

Եթե աշխատավայրը ներառում է այնպիսի տարածք, որտեղ, աշխատանքի բնույթով պայմանավորված, աշխատողներին վտանգ է սպառնում կամ առարկաներն ընկնելու վտանգ կա, ապա աշխատավայրը հնարավորինս պետք է զինված լինի կողմնակի անձանց մուտքն արգելող սարքերով:

Պետք է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ վտանգավոր տարածքներ մուտք գործելու իրավասություն ունեցող աշխատողներին պաշտպանելու համար:

Վտանգավոր տարածքները պետք է հստակ նշված լինեն:

11.

Հանգստի սենյակները և հանգստի տարածքները

11.1.

Եթե աշխատողների անվտանգության և առողջության համար պահանջվում է, մասնավորապես, իրականացվող աշխատանքի բնույթով պայմանավորված կամ աշխատողների որոշակի թվից ավելի աշխատողների առկայություն, ապա աշխատողները պետք է ապահովվեն հասանելի հանգստի սենյակներով կամ համապատասխան հանգստի տարածքով:

Սույն դրույթը չի կիրառվում, եթե աշխատողներն աշխատում են գրասենյակներում կամ նմանատիպ աշխատանքային սենյակներում, որոնք ընդմիջումների ժամանակ համարժեք հանգիստ են ապահովում:

11.2.

Հանգստի սենյակներն ու հանգստի տարածքները պետք է կահավորված լինեն սեղաններով և հենակներով աթոռներով:

11.3.

Հանգստի սենյակներում ու հանգստի տարածքներում պետք է ծխախոտի ծխից առաջացած անհարմարության դեմ ներդրվեն համապատասխան միջոցներ՝ չծխողների պաշտպանության համար:

12.

Հղի կանայք և կերակրող մայրերը

Հղի կանայք և կերակրող մայրերը պետք է համապատասխան պայմաններում հանգստի նպատակով պառկելու հնարավորություն ունենան:

13.

Սանիտարական և տեխնիկական հարմարությունները

13.1.

Հանդերձարանները և պահարանները

13.1.1.

Աշխատողները պետք է ապահովվեն համապատասխան հանդերձարաններով, եթե նրանք պետք է կրեն հատուկ աշխատանքային համազգեստ և, եթե առողջության կամ գույքի նկատառումներից ելնելով, նրանք չեն կարող հագուստը փոխել մեկ այլ սենյակում:

Հանդերձարանները պետք է հեշտ հասանելի լինեն և ունենան բավարար հարմարություններ:

13.1.2.

Հանդերձարանները պետք է հարմարություններ ունենան, որպեսզի յուրաքանչյուր աշխատող իր հագուստը պահարանում դնի և փակի աշխատանքային ժամերի ընթացքում:

Պայմանավորված հանգամանքներով (օրինակ՝ վտանգավոր նյութեր, խոնավություն, կեղտ), հագուստի պահարանները պետք է առանձնացված լինեն սովորական հագուստի պահարաններից:

13.1.3.

Անհրաժեշտ է դրույթ նախատեսել՝ տղամարդկանց և կանանց համար առանձին հանդերձարաններ կամ միևնույն հանդերձարանի առանձնացված օգտագործում ապահովելու համար:

13.2.

Լողացնցուղիները, զուգարանները և լվացարանները

13.2.1.

Աշխատավայրերը պետք է կազմակերպված լինեն այնպես, որ աշխատողների համար մոտակայքում ապահովվի՝

լողացնցուղներ, եթե աշխատանքի բնույթից ելնելով պահանջվում է,

– բավարար թվով զուգարանակոնքերով և վացարաններով համալրված հատուկ հարմարություններ:

13.2.2.

Լողացնցուղները և վացարանները պետք է ապահովված լինեն հոսող ջրով (անհրաժեշտության դեպքում տաք ջրով):

13.2.3.

Անհրաժեշտ է դրույթ նախատեսել՝ տղամարդկանց և կանանց համար առանձին լողացնցուղներ կամ միևնույն լողացնցուղի առանձնացված օգտագործում ապահովելու համար:

Անհրաժեշտ է դրույթ նախատեսել՝ տղամարդկանց և կանանց համար առանձին զուգարաններ կամ միևնույն զուգարանից առանձնացված օգտագործում ապահովելու համար:

14.

Առաջին բուժօգնության սարքավորումները

Աշխատավայրերը պետք է ապահովված լինեն առաջին բուժօգնության սարքավորումներով:

Սարքավորումների վրա պետք է համապատասխան նշումներ լինեն և դրանք պետք է հեշտ հասանելի լինեն:

15.

Հաշմանդամ աշխատողները

Աշխատավայրերն անհրաժեշտության դեպքում պետք է կազմակերպված լինեն հաշմանդամ աշխատողների կարիքները հաշվի առնելով:

Սույն դրույթը կիրառվում է մասնավորապես դռների, միջանցքների, աստիճանավանդակների, լողացնցուղների, վացարանների, զուգարանակոնքերի և

աշխատակայանների նկատմամբ, որոնք ուղղակիորեն օգտագործվում կամ զբաղեցվում են աշխատակայանների հաշմանդամ անձանց կողմից:

16.

Հետիոտների և տրանսպորտային միջոցների տեղաշարժը

Բացօթյա և փակ աշխատավայրերի դիրքն ու կառուցվածքը պետք է լինեն այնպես, որ հետիոտնը և տրանսպորտային միջոցները կարողանան անվտանգ տեղաշարժվել:

17.

Բացօթյա աշխատավայրերը (հատուկ դրույթներ)

Եթե աշխատողներն աշխատում են բացօթյա պայմաններում, ապա նման աշխատակայանները հնարավորինս պետք է կազմակերպված լինեն այնպես, որ աշխատողները՝

ա) պաշտպանված լինեն եղանակային անբարենպաստ պայմաններից և, անհրաժեշտության դեպքում, ընկնող առարկաներից,

բ) չգտնվեն աղմուկի վնասակար մակարդակի կամ վնասակար արտաքին ազդեցությունների ներքո, ինչպիսիք գազը, գոլորշին կամ փոշին են,

գ) կարողանան վտանգի դեպքում արագ հեռանալ իրենց աշխատավայրերից կամ կարողանան արագ օգնություն ստանալ,

դ) չսայթաքեն կամ վայր չընկնեն: